


ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԶՈՐՍԶԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ



Մ Ե Ղ Ա Ի Ո Ր Յ Ա Կ Ո Ր

Գրեց՝ Գ. Գ. Զ.

Ներկայ 1912 սարին իր մեջ կը բովանդակէ հայկական սպագրութեան գիւստէն մինչեւ այսօրուան չորս դարերու խորհուրդը: Շատերու ցարդ անձամօր մնացած անուն մըն է այն՝ որ մեր յօդուածին իբր խորագիր ընտրեցինք եւ որուն *ձեռամբ սպագրուեցաւ* հայերէն առաջին սուրբ *ստեղծերը*:

Կիւրքբենայեակի համաժամարհային գիւստէն 57 սարի միայն յետոյ հայր, առանց ունենալու հաղաքական ինքնիշխանութիւն, գրականութեան ու արուեստի փայլուն դարաւերջան մը, արեւելեան ժողովրդոց մեջ առաջինը կը լլար *յոյսի* դրօշակը վեր բարձրացնող ու սպագրութեան արուեստին լանձնող՝ իր հապուկ ու գեղեցիկ *ստեղծերը*:

Այլ եւս աշխատութիւնը պիտի բազմապատկուէր. գրչագիրը պիտի դադրէր միայն եկեղեցիներու, իշխաններու սեփականութիւնը ըլլայէ ու պիտի ըլլար ժողովուրդինը:

Եւ թերեւս այդ իսկ պատճառաւ առաջին գիրքը որ կը սպագրուի չէր թէ Սաղմոս կամ Ժամագիրք կամ Աւետարան կ'ըլլայ, այլ *սքարստման* մը հայոց 961 թուին (1512) որ իր մեջ կը բովանդակէր 1. *Կաղանկացոյց* 2. *Երազացոյց* 3. *Մընչնկեան սրայոց* 4. *Մարմնախաղաց*:

Այսինքն թէ ժողովուրդին հոգեբանութեան կարկառուն ապացոյցը իր մեջ կը բովանդակէր հայ առաջին գիրքը:

Զրկուած ու տառապած հայր միշտ երազած էր յոյսով լեցուն՝ կաղանկի նոր օրուան հետ, փափախներով լեցուն գիշերային հանգիստը իսկ խռովող յոռի երազներուն մեկնութեամբբ: Ուրախութեամբ առջցուն իր զաւակներուն ծննդովը, վերջապէս գործել սկսելու համար ինքն իր մեջ ամփոփուած՝ մտիկ ընելով իր մարմնոյն խաղերը ու բոս այնմ մեկնելով:


Գծադրաբար բանաստեղծութիւնը անկարող եղած է ցարդ մեզ

լուսաբանելու առաջին հայ սպագրուած գիրգին մասին: Նը-
 ւանագրուած մը D. I. Z. A. սկզբնաստեղծով որով ցարդ ան-
 լուծելի կը մնան եւ անուն մը *Մեղաւոր Յակոբ*, ահա բարբ:

Եւ սակայն առաջինէն միշտ այսօր պատկերացնող այդ
 հսկայ դարերու իւրաքանչիւրը ունեցած է իր փայլուն շրջան-
 ները ու գործողները, այդ պարագաները լուսաբանող երեք
 հոգի փոխանորդելով իւրաքանչիւրը հայ գրական գործունեու-
 րեան մէկ մէկ խնոր հասուածի մեզ կը ներկայանան երեք
 պատկառելի երկասիրութիւններով:

Վեներսիկը, օրրանը հայ սպագրութեան առաջին արուես-
 տին, իր ներկայացուցիչին Հ. Արսէն Պագիկեանի միջոցաւ մեզ
 կը ցուցադրէ հսկայ մասեմաւարը զոր Մեղաւոր Յակոբէն մին-
 չիւ այսօր բաւարոյ սարիներու քիւրի սակ հայ անհասներ աւ-
 խասած երկնած ու արտադրած են գրքի եւ կամ լրագրի ձե-
 լին սակ:

Պոլիսը, սնուցիչը ու սարածիչը հայ
 սպագրական արուեստին, իր մէկ աւ-
 խասաւորին, Վանան Զարդարեանի,
 միջոցաւ մեզ կը ներկայացնէ կեանքն
 ու վարքը բարբ անուց, որով 1512էն
 ի վեր ո եւ է կերպով նպաստած են
 հայ անունը, հայ գրականութիւնը ու
 հայ մամուլը փառաւորելու:



ՀԱՅ ՏՊԳ. Ա. ՆՇԱՆԱԴՐՈՇՄԸ

Կովկասը, վերջին ընդգրկողը սը-
 պագրութեան, իր գաւկիին, Առաքել
 Բաբախանեանի (Լեօ) կը բողոք կա-
 սարելագործելու համար այդ ամենը, որ կը պատմագրէ հայ
 կեանքին ու սպագրութեան շրջանները հոն խտացնելով ամեն
 ինչ, ուսումնասիրութեան սեղմ շրջանակով:

Ու հայ ազգին բարբ միւս գաւաղներուն ուրիշ բան չի
 մնար ընել երէ ոչ դափնիներ բարձրացնել եւ խմբուիլ հայ մա-
 մուլին շուրջ տակնու համար չորսհարիւրամեակը Հայկական
 Տպագրութեան:

12 Հոկտ. 1911